14853

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«23» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0226-21

Ձեռնարկողը՝ ***«Հովգազ» ՍՊԸ***
Շիրակի մարզ, գ. Փանիկ փողոց 12 տ 8 3026

Գործունեությունը՝ ***Փանիկ համայնքի 3-րդ փողոց թիվ 1/3 հասցեում ձեռնարկվող ավտոմեքենաների գազալցաճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0226-21

<23> 12 2021թ.

Շիրակի մարզի Փանիկ համայնքի թիվ 3-րդ փողոց 1/3 հասցեում ավտոմեքենաների գազալցաճնշակայանի կառուցման հայտ

Ձեռնարկող՝	«ՀՈՎԳԱԶ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Շիրակի մարզ

Ներածական մաս. Ավտոգազալցաճնշակայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզի Փանիկ համայնքի 3-րդ փողոց 1/3 հասցեում:
- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակն է կառուցել ավտոմեքենաների գազալցաճնշակայան: Նախատեսվող գործունեության հողամասը կառուցապատված է, քանի որ նախկինում օգտագործվել է որպես ավտոսպասարկման կետ:

ԱԳԼՃԿ-ի կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.
- հողամասի ընդհանուր մակերես – 2742.3քմ
- շենքեր, շինություններ – 345.43 քմ
- ասֆալտապատ տարածք - 940.87քմ/ որից՝
- բետոնե սալվածք – 150.0քմ
- կանաչապատ տարածք – 1456.0քմ:

Գազալցաճնշակայանի կառուցման համար օգտագործվելու են առկա 3 կիսակառույց շինությունները, որոնք պետք է վերակառուցվեն և ծառայեն որպես կոմպրեսորային, օպերատորային մասնաշենքեր և բուֆետ: Կիսակառույց կոմպրեսորային մասնաշենքը զբաղեցնում է 83.8 քմ, սպասասրահը 19.32 քմ, ադմինիստրատիվ մանաշենքը 17.51 քմ, իսկ օպերատորային մասնաշենքը՝ 11.2քմ տարածք: Հարևանությամբ գտնվում են բնակելի

02543103 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

կառուցապատված հողամասեր և համայնքապատկան հողեր: Տարածքում նախատեսված է կառուցել հասարակական սպասարկման օբյեկտ:

Ավտոմեքենաների գազալցման ճնշակային կայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական նորմերի պահանջներին համապատասխան: Սեղմած բնական գազով ավտոմոբիլային գազալիցքավորման ճնշումային կայանը (ԱԳԼՃԿ) բաղկացած է կոմպրեսորային մոդուլից, տեխնիկական շինությունից, գազակուտակիչ ստորգետնյա գազամբարից, օպերատորային շինությունից, ավտոմեքենաների գազալցակետից, հակահրդեհային ջրի բաքից, ջրի պոմպից, հիդրանտներից, էլ. ենթակայանից, 2 հատ շանթարգելից: Ճնշակայանը գտնվում է կոմպրեսորային մասնաշենքում:

Նախատեսվող գործունեության մուտքի մոտ նախատեսվում է կառուցել սպասասրահ և սանհանգույցներ, իսկ կոյուղաջրերի և կեղտաջրերի համար նախատեսված է հոր/2.25քմ մակերեսով/: Նախատեսվում է նաև ձայնային և լուսային ազդանշանային համակարգերի տեղադրում, հողանցման համակարգ, որը էլեկտրաանվտանգության ապահովման հիմնական միջոց է հանդիսանում: Օդափոխությունը նախատեսված է իրականացնել օդափոխության համակարգով: Կոմպրեսորային մոդուլում և գազակուտակիչ բունկերում նախատեսված է օդափոխության բնական արտածման և հրդեհի ազդարարման չհասցեավորված համակարգեր:

Արտաքին հրդեհաշիջման համար նախատեսված է 100խմ ծավալով տարողությամբ հակահրդեհային ջրավազան և 2 հրշեջ հիդրանտ:

Կառուցապատման աշխատանքների իրականացման ժամանակացույցը 18 ամիս է:

Նախատեսվող գազալցման կայանը նախատեսված է շահագործել շուրջօրյա ռեժիմով:

Շինարարական աշխատանքների ընթացքում ԱԳԼՃԿ-ի և օժանդակ շինությունների կառուցման համար նախատեսվում է ընդհանուր 100խմ ծավալով հողային աշխատանքների հանույթ/որից 80խմ ծավալն առաջանում է ստորգետնյա գազակուտակիչ բունկերի կառուցման աշխատանքներից/, քանի որ շինությունները հիմնականում գոյություն ունեցող են: Մնացորդային հողային զանգվածը կկուտակվի կազմակերպված շինարարական հրապարակի տարածքում և ամբողջությամբ կօգտագործվի գազալցակայանի շրջակա տարածքի հարթեցման և բարեկարգման համար:

Շինարարական տեխնիկայի համար վառելիքի լիցքավորումն ու յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում, կամ սպասարկման կետերում:

Շինաշխատանքերի ընթացքում առաջացող շինարարական աղբը/50խմ ծավալով/, ամբողջությամբ կտեղափոխվի Փանիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Նախատեսվող ավտոգազալցաճնշակայանի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն:

Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կենցաղային կեղտաջրերն ինքնահոս կհավաքվեն և կհեռացվեն ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց, որտեղից կուղղվեն կեղտաջրերի անջրթափանց հոր և հատուկ մեքենաներով կհեռացվեն սահմանված կարգով: Շինարարության փուլում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոնների քանակը կազմում է 120կգ/տարի: Թափոնները պատկանում են վտանգավորության III դասին: Բաղկացած են մեխանիկական խառնուրդներից, ջրից, յուղից:

Շահագործման փուլում գազալցակայանի կենցաղային թափոնների հեռացման համար տարածքում կտեղադրվեն աղբամաններ, որտեղ կուտակված կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կհեռացվի հանրային աղբաման:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքները բարեկարգվելու են և բերվելու են նախնական տեսքի: Այս աշխատանքների շրջանակում նախատեսվում է երթևեկելի հատվածների, անցուղիների ասֆալտապատում, մայթերի ստեղծում, բազալտե եզրաքարերի իրականացում: Նախատեսվում է ԱԳԼՃԿ-ի տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է 1456.0 քմ: Կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է արժեքավոր ծառատեսակների և բուսատեսակների տնկում, որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղանքի բնակլիմայական պայմանները:

ԱԳԼՃԿ-ի 1456.0 քմ մակերեսով տարածքի կանաչապատման աշխատանքների համար նախատեսվում է տրամադրել 2 000 000 ՀՀ դրամ:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ չկան:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր.

- շինարարական աշխատանքների /հողային աշխատանքներ/ ընթացքում տարվա չոր և շոգ եղանակին նախատեսվում է իրականացնել ջրցան,
-շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը պարբերաբար ստուգում և կարգավորում,
-շինարարական նյութերը (հատկապես սորուն շինարարական նյութերը, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելելի փոշու տարածումը,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով շինհրապարակում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական աղբի պահում պոլիէթիլենային պարկերում, աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրում շինարարական աղբից,
- շինաշխատանքների ընթացքում քսայուղերի ու հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդի պահում հատուկ անթափանց և փակ տարաներում (ավազե, մետաղական, կամ բետոնե) հիմքերի վրա, դրանց արտահոսքով պայմանավորված հնարավոր աղտոտումը բացառելու նպատակով,
- հակահրդեհային նպատակով նախատեսել փոշային և փրփրային կրակմարիչ և ասբեստային ծածկոց,
- բոլոր մեքենաներն ապահովել համապատասխան խլացուցիչներով,
- շինարարական աշխատանքներն ու տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները:

Շինարարության ընթացքում նախատեսվում է իրականացնել նաև մթնոլորտային օդի որակի, աղմուկի, թրթռման, հողային ծածկույթի մշտադիտարկումներ:

Շինհրապարակի համար առաջարկվող մոնիթորինգի միջոցառումները հետևյալն են՝

- մթնոլորտային օդի որակի արտաքին մոնիթորինգ ամսվա մեջ երկու անգամ,
-շրջակա տարածքների հողային ծածկույթի արտաքին մոնիթորինգ ամսվա մեջ մեկ անգամ,
-տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, ամսվա մեջ մեկ անգամ հաճախականությամբ:

Մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է 250.0 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Ավտոգազալցաճնշակայանի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Շիրակի մարզի Փանիկ համայնքի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները ինչպես նաև Շիրակի մարզպետարան ու Փանիկի համայնքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Կազմակերպության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 21-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերն ու պահանջները:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից

անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:

-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հովգազ» ՍՊ ընկերության կողմից Փանիկ համայնքի 3-րդ փողոց թիվ 1/3 հասցեում ձեռնարկվող ավտոմեքենաների գազալցաճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Գ. Մինասյան